ՀՏԴ 94(5)
Պատմություն

Արմինե ԽԱՉԱՏՐՅԱՆ
պ.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԱՆԹՈՒՐՔԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԶԱՎԹՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

Սույն հոդվածում ներկայացված են 1918թ. ստեղծված Ադրբեջանի հանրապետության հռչակման նախադրյալները և նրա վարած զավթողական քաղաքականության դրդապատճառները:
Առաջ է քաշված այն տեսակետը, ըստ որի՝ Ադրբեջանի ստեղծման, հիմքում դրված էր Թուրքիայի որդեգրած պանթուրքիզմի ազգայնամոլական քաղաքականությունը: Պանթուրքիզմը ենթադրում էր մեկ միասնական թուրքական պետության ստեղծում և առանձին պետության՝ Ադրբեջանի հռչակումը ոչ թե շեղում էր պանթուրքիզմի հռչակած սկզբունքներից, այլ կոչված էր կամուրջ հանդիսանալու թուրքալեզու ժողովուրդների միավորման ճանապարհին: Ադրբեջանի զավթողական քաղաքականության հիմքում դրված էր պանթուրքիզմի գաղափարախոսությունը:
Բանալի բառեր՝ *պանթուրքիզմ, գաղափարախոսություն, քաղաքականություն, զավթողական, Ադրբեջան, պատմագիտություն, տարածքային, հավակնություններ, ստեղծում, ազգային:*

А.Хачатрян

СОЗДАНИЕ АЗЕРБАЙДЖАНСКОГО ГОСУДАРСТВА КАК ПРОЯВЛЕНИЕ ИДЕОЛОГИИ ПАНТУРКИЗМА И ЗАХВАТНИЧЕСКОЙ ПОЛИТИКИ ТУРЦИИ

В этой статье представлены первопричины провозглашения, созданной в 1918г. Азербайджанской Республики и подоплеки ее захватнической политики. Провозглашение Азербайджана отнюдь не было отходом от политики пантюркизма, направленной на об'единение тюркоязычных народов и их территорий в границах единного турецкого государства.
Азербайджан был призван стать мостом между Турцией и другими тюркоязычными народами, по сути плацдармом для турецкой экспансии на Кавказе, Центральной Азии, с дальнейшем присоединением к ней.
Ключевые слова: *пантюркизм, идеология, политика, инвазивность, Азербайджан, историография, территориальная, фальсификация,*

турецкий, творчество.

A.Khachatryan

THE FOUNDATION OF ADRBEJANI STATE, AS THE MANIFESTATION OF TURKISH AGGRESSIVE POLICY AND TURKISM IDEOLOGY

This article presents the motives for the proclamation of the Republic of Azerbaijan and its invasive policy in 1918. There is a view that the creation of Azerbaijan is based on the nationalist ideology of pan-Turkism adopted by Turkey. Panturkism meant the creation of a united Turkish state, and the proclamation of a separate state, Azerbaijan, did not deviate from the principles proclaimed by Panturkism, but was intended to be a bridge for the unification of the Turkic-speaking peoples. The ideology of Pan-Turkism was at the heart of Azerbaijan's invasive policy.

Keywords. *Panturkism, ideology, politics, invasive, Azerbaijan, historiography, territorial, falsification, Turkish, creation.*

1918թ. Անդրկովկասում իրենց անկախությունը հռչակեցին երեք հանրապետություններ՝ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը: Անդրկովկասում ստեղծված քաղաքական նոր իրողությունները ոչ միայն պետականությունների կերտման, այլև ազգային հիմնախնդիրների սրման պատճառ հանդիսացան: Ազգային անկախության հռչակումը, պետականության ստեղծումը պետք է հիմնված լինեն ազգային պատմության, ազգային արժեքների, ազգային ինքնագիտակցության վրա:

Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը 1918թ. մայիսի 28 –ին կորուսյալ պետականության կրկին ձեռք բերումն էր, պետականություն՝ հիմնված հնագույն արմատներ ունեցող ժողովրդի, ազգի, նրա պատմության մշակույթի, արժեհամակարգի վրա: Այլ կերպ ասած՝ հայ ժողովուրդը կրկին վերագտավ իր անկախությունը և հռչակեց իր պետականության ձեռքբերումը: Նույնը չի կարելի ասել 1918թ. մայիսի 27–ին կյանքի կոչված նորահռչակ Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության մասին: Քաղաքական քարտեզի վրա ուրվագծված այս նորաստեղծ պետությունն ստեղծվեց ոչ այն ուղով, որով սովորաբար ընթանում է ազգային պետությունների ստեղծումը: Ի սկզբանե ադրբեջանական հանրապետության հռչակումը տեղի ունեցավ ոչ թե ազգային ինքնագիտակցության հասունացման, այլ թուրքական ազգայնամոլական, զավթողական գաղափարախոսության հենքի վրա: Քեմալականների իշխանության գալը 1918 թ. չէր նշանակում հրաժարում պանթուրքիզմից, ընդամենը այն նորովի խմբագրվեց՝ հիմքում առավել շատ ունենալով ազգայնականությունը՝ թուրքիզմը: Քեմալականները Թուրքիայի քաղաքական կյանքում էական տեղ էին հատկացնում ազգայնականության սկզբունքին[1]: Ադրբեջանի ստեղծումը թուրքիզմի նոր

[1] ***Սողոմոնյան Ա.,*** *Թուրքական պատմագիտական ընկերության ստեղծումը և գործունեությունը 1923-1970ական թթ., Եր., 2005, էջ 14:*

դրսևորում էր: Սակայն իրականում ոչ քեմալականները, ոչ էլ Ադրբեջանի ազգային պետության ստեղծման ջատագովները չէին հրաժարվել պանթուրքիզմից՝ այն համարելով հեռագնա նպատակ:

Փաստորեն, ի տարբերություն հայ ժողովրդի հռչակած անկախության, Ադրբեջան նորելուկ պետության անկախությունը արդյունք էր Թուրքիայի հետապնդած ծավալապաշտական քաղաքականության և որդեգրած պանթուրքիզմի գաղափարախոսության: Այս փաստը ակնառու է ադրբեջանցի պատմաբանների աշխատություններում: Ըստ ադրբեջանցի պատմաբան Ա. Բալաևի՝ Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության ազգային խորհրդի նախագահ Մ.Ռասուլզադեն, ով լուրջ ներդրում ունեցավ այդ պետության հռչակման գործում, բազմիցս նշել է, որ ադրբեջանցին իրեն որպես ազգություն չի ընկալում, քանի որ նա զուրկ է ազգային ինքնագիտակցությունից: Ըստ վերջինիս՝ ադրբեջանցին ավելի շատ իրեն զգում է որպես մուսուլման: Իր աշխատության մեջ Բալաևը նշում է. «Եթե որևե ադրբեջանցու հարցնես, ինչ ազգի ես դու պատկանում, կպատասխանի մուսուլման, կամ ինչ լեզվով ես խոսում, մուսուլմանական, կամ ինչ մշակույթի ես պատկանում, դարձյալ մուսուլմանական»[1]: Նույն Ռասուլզադեն գրել է, թե ադրբեջանցին իրեն զգում է որպես կովկասյան թաթար, որպես մուսուլման, բայց ոչ երբեք ադրբեջանցի:

Առաջին աշխարհամարտում պարտություն կրած Թուրքիայի իշխող վերնախավի համար պարզ էր, որ որդեգրած պետական գաղափարախոսության՝ պանթուրքիզմի իրականացումը, որը ենթադրում էր համաթուրքական իդեալի՝ մեծ Թուրանի պետության ստեղծում, լուրջ խոչնդոտների է հանդիպում, ուստի փոխելով մարտավարությունը՝ քեմալականները որդեգրեցին՝ մեկ միասնական թուրք ժողովրդի առանձին ազգային պետությունների ստեղծման մարտավարությունը՝ հիմքում պահպանելով համընդանուր ծավալապաշտական քաղաքականությունը:

Պանթուրքիզմից սերտաճած և նրա գաղափարներով սնուցված մի շարք գործիչների՝ Աղաօղլուի, Հուսեյնզադեի, Ռասուլզադեի նպատակն է դառնում Կովկասում թուրքական պետության՝ Ադրբեջանի ստեղծումը: Ադրբեջանի ստեղծումն իրավամբ կարող ենք ասել արհեստածին էր, և ամենակարևորը՝ անհիմ այն իմաստով, որ պետությունն այդ հիմնված էր ոչ թե ազգության և նրա դարավոր ազգային արժեքների վրա, այլ Թուրքիայի որդեգրած և մուսավաթական կուսակցությանը փոխանցված ծավալապաշտական, ազգայնամոլական գաղափարախոսությունների՝ օսմանիզմի, թուրքիզմի, պանթուրքիզմի գաղափարների և թուրք ադրբեջանական գործարքի արդյունքում:

---

[1] ***Балаев А.***, *Азербайджанская нация, основные этапы становления на рубеже 19-20ых вв., Б. ,2012,, стр.8.*

Այն, որ Ադրբեջանը անարմատ, ապազգային նախագծով ստեղծված պետություն էր, խոստովանում են ադրբեջանական պատմագիտության ներկայացուցիչները:

Այսպես՝ Բալաևի աշխատության մեջ նշված է. «Մինչև 1918թ. մայիսի 28- ը գոյություն չուներ առանձին, ճանաչված ազգային – վարչական և սոցիալ – քաղաքական միավոր «Ադրբեջան» անունով: Միայն 1918թ. մայիսի 28-ին Ադրբեջանի ազգային խորհուրդը հաստատեց ադրբեջանական ազգի գոյությունը քաղաքական իմաստով: Դրանով «Ադրբեջան» եզրույթը աշխարհագրական, ազգագրական, լեզվաբանական եզրույթից վերածվեց քաղաքական եզրույթի»[1]: Պետք է ասել, որ Ադրբեջանը որպես անկախ պետություն հռչակելու որոշ գործիչների ջանքերը հանդիպում են լուրջ դժվարությունների: Բանն այն է, որ կովկասյան թաթարների էթնիկական հանրությունը պատրաստ չէր վերածվելու ազգության և պետության: Դա է պատճառը, որ սկզբից ևեթ ադրբեջանական պետության ստեղծման ջատագովները, ինչպիսիք էին՝ Ռասուլզադեն, Խոյսկին, իրենց մտադրություններում լուրջ դիմադրության հանդիպեցին ներքին ուժերի կողմից, ովքեր դեմ էին Ադրբեջանը որպես անկախ պետություն հռչակելու ծրագրին և այն դիտում էին զուտ համաթուրքական տիրույթում՝ օսմանյան տերության կազմում: Մի շարք գործիչներ շատ լավ հասկանում էին, որ ադրբեջանցիներին մեկ պետության մեջ միավորումը ընթանալու էր մեծ դժվարություններով՝ հաշվի առնելով ազգային ինքնագիտակցության խիստ ցածր մակարդակը: Ուստի նրանց մոտ ծագեց ադրբեջանական պետության ստեղծման ճանապարհով ադրբեջանական ազգի կերտման միտքը՝ հավակնելով պետության ստեղծմամբ հասնելու նաև ազգի ստեղծմանը: Առաջնային հարթակի վրա բարձրացվեց պանթուրքիզմից սերտաճած մի նոր գաղափարախոսություն՝ ադրբեջանիզմը, ինչը պետք է լիներ ադրբեջանական պետության ու ազգի ստեղծման հիմքում: Մուսավաթի, ինչպես ժամանակին իթթիհատի կուսակցության գլխավոր նպատակը մուսուլմանական աշխարհի միավորումն էր և այդ ճանապարհին՝ արգելքների, հայկական սեպի վերացումը:[2]

Անկախ Ադրբեջանի ստեղծման կարգախոսը ընկած էր ադրբեջանիզմի գաղափարախոսության հիմքում: Այժմ անդրադառնանք այն հարցին՝ ինչքանով է ադրբեջանիզմը սնվել հենց պանթուրքիզմից: Անկասկած, պանթուրքիզմից սնված նորելուկ այդ գաղափարախոսությունը՝ ադրբեջանիզմը, ոչ այլ ինչ էր, քան նույն ծավալապաշտական, զավթողական պանթուրքիզմի մի նոր դրսևորում: Նույն Ռասուլզադեն գրում էր, որ պանթուրքիզմն իրականում ավելի ռոմանտիկ գաղափարախոսություն էր և նրանից պետք է հրաժարվել: Կա միայն

---

[1] ***Балаев А., М. Э. Расулзаде***, *Б.2009, стр.82*

[2] ***Балаев А***. *Азербайджанское национальное движение 1917-1918гг. Баку 1998,стр. 31.*

թուրքիզմ, որը արդեն հետապնդում էր բացառապես ավելի ռեալ և կոնկրետ ազգային նպատակներ: Սակայն անժխտելի է այն փաստը, որ ադրբեջանական պետության ստեղծումը թուրքիզմի դրսևորումն էր: Այդ պետական կազմավորման գաղափարախոսությունը նույնն էր, ինչ թուրքական պետության որդեգրածը:

Նույն Բալանը գրում է, որ թուրքիզմը մեծ դեր խաղաց առանձին թուրքական ցեղերի համար իսլամի կրոնական համակարգից անցում կատարելու ազգային համակարգ: Ըստ Բալանի՝ Թուրքիայում լճացում սկսվեց որդեգրած պանթուրքիզմի գաղափարախոսության շուրջ, և պահը ճիշտ ըմբռնելով՝ Ադրբեջանում փաստորեն վերածնվեց այն: Ռասուլզադեն նշել է. «Պատմական նոր առաքելությամբ է հանդես եկել Ադրբեջանը, այդ պատանի քաջը, Թուրանի մեծ հույսը» : Վերջինս թուրքիզմը դիտել է, ոչ թե «թուրքական հետագա միասնականության, մեկ պետություն ստեղծելու հիմքով, այլ առանձին ազգային միավորումների մեջ»[1]: Ի դեպ, ադրբեջանականացման ուղղության հիմքում ընկած էր Հուսեյնզադեի և Աղաօղլուի «միասնական թուրքական ազգի» գաղափարը: Ըստ թուրք պատմաբանի՝ այդ գաղափարը մեծ դեր խաղաց թուրքական ժողովուրդների ազգային ինքնագիտակցության արթնացման գործում: Թուրք գործիչների Հուսեյնզադեի և Աղաօղլուի առաջ քաշած «համաթուրքական իդեալը հեղափոխականացրել է թուրքական ցեղերի ժողովրդական զանգվածներին »: Նրանք, լինելով բազմամիլիոն ազգի առանձին ցեղեր, հանդես եկան ազատության ու անկախության հռչակմամբ՝ թիկունքում ունենալով հենց այդ բազմամիլիոն թուրքական ազգի ներշնչած հույսը, մղել նրանց պայքարի՝ դարավոր թշնամու դեմ »[2]:

Պարզ է, որ դարավոր թշնամին այն հինավուրց ազգերն են, որոնք, լինելով, ապրելով իրենց բնօրրաններում, խոչընդոտ էին նրանց հետապնդած համաթուրքական իդեալների, զավթողականության ճանապարհին: Փաստորեն 1918թ. թուրքական արշավանքը Անդրկովկաս, Ադրբեջանի տարածքային հավակնությունները Հայաստանի Հանրապետության նկատմամբ պայմանավորված էր թուրք – ադրբեջանական փոխհամագործակցությամբ: Ամեն կերպ խոչնդոտել հայկական պետության, հայ ժողովրդի պետականակերտման գործընթացներին, հավակնել պատմական հայկական հողերին՝ Լեռնային Ղարաբաղին, Զանգեզուրին, Նախիջևանին. սա էր թուրք – ադրբեջանական քաղաքականության գերխնդիրը: Նիֆտալիևի աշխատության մեջ նշված է. «Մուստաֆա Քեմալը» մտահոգություն է հայտնել, որ սովետական Ռուսաստանը ցանկանում է Թուրքիայի և Ադրբեջանի արանքում ստեղծել անկախ հայկական պետություն: Քեմալը Կարաբեքիրին գրած նամակում

---

[1] ***Балаев А.,*** *., Азербайджанская нация, основные этапы становления на рубеже 19-20ых вв., Б. ,2012, стр. 106.*

[2] ***Расулзаде М.Э.****, О пантуранизме в связи с кавказской проблемой, Б., 1930, стр.68*

գրում է . «Ադրբեջանը պետք է իսկապես դառնա անկախ պետություն, պետք է ռուսներին հասկացնել, որ Ադրբեջանի նկատմամբ վերաբերմունքը կլինի ցուցանիշ ընդհանուր իսլամական աշխարհին իրենց վերաբերմունքի մասին»: Քեմալականները չէին կարող անտարբեր մնալ եղբայրական Ադրբեջանի նկատմամբ: Ադրբեջանը և ադրբեջանական թուրքերը այն կամուրջն են, որը պետք է միացներ Թուրքիային թուրքերի հետ, որոնք ապրում էին Կովկասում:[1] Փաստորեն հայկական պետության, հայ ժողովրդի գոյությունը դիտված էր որպես սեպ՝ պանթուրքիզմ – ադրբեջանիզմի միացյալ գաղափարախոսության, զավթողական քաղաքականության իրականացման ճանապարհին: Հայկական հողերի նկատմամբ տարածքային հավակնությունները պետք է դիտել հենց այդ լույսի ներքո: Այսպիսով՝ Ադրբեջանի պետականության կերտումը Թուրքիայի հետապնդած պանթուրքիզմի գաղափարախոսության հերթական հանգրվանն էր:

Գրականություն

1. Սողոմոնյան Ա., Թուրքական պատմագիտական ընկերության ստեղծումը և գործունեությունը 1923-1970ական թթ., Եր., 2005:
2. Балаев А., Азербайджанская нация, основные этапы становления на рубеже 19-20ых вв., Б. , 2012.
3. Балаев А., М. Э. Расулзаде, Б.2009.
4. Балаев А. Азербайджанское национальное движение 1917-1918гг. Баку 1998.
5. Нифталиев И., Азербайджанская ССР в экспансионистских планах армян (20-е годы 20-ого века),Баку, 2010.
6. Расулзаде М. Э., О пантуранизме в связи с кавказской проблемой, Б. 1930

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ., Վ.Մ.Ավանեսյանը:

[1] ***Нифталиев И.***, *Азербайджанская ССР в экспансионистских планах армян (20-е годы 20-ого века),Баку, 2010., стр.78.*